ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 մայիսի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

64
(2914)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓՈԽՄԱՐԶՊԵՏԻ ԿԻՆԸ 4 ՏԱՐԻ Է՝ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՉԻ ԼՐԱՑՆՈՒՄ



Իշխանությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը «զավթելու» մտադրություններ վաղուց է որոնում: Սա, ըստ երեւույթին, արվում է սեփական թերությունները շտկելու ու կոռուպցիոն վարույթները կարճելու համար: Ներկայիս իշխանությունը, որը նախկինում ընդդիմություն էր, կաղաղակեր եւ կթմբկահարեր, երբ իշխանական որեւէ պատգամավորի կին կամ ընտանիքի այլ անդամ հայտարարագիր չներկայացներ: Օրինակ՝ հարցական է, թե ինչ կասեն ԿԿՀ-ն եւ իշխանական թեւը այն փաստի մասին, որ սեփական պատգամավորի կինը արդեն գրեթե 4 տարի է հայտարարագիր չի ներկայացնում:

Այսպիսով՝ Գեղարքունիքի հետհեղափոխական փոխմարզպետ, ապա ԱԺ պատգամավոր Նարեկ Գրիգորյանի հայտարարագիրը, կարծես, ըստ պահանջի լրացված է, սակայն նույնը չենք ասի կնոջ հայտարարագրի մասին: Նարեկ Գրիգորյանի կինը՝ Մարիետա Նիկոյանը, 2020-2021 թվականներից հայտարարագիր չի ներկայացրել, չնայած նրան, որ աշխատում է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանում՝ որպես առաջատար մասնագետ: Սա դեռ ամենը չէ. մինչեւ հունիսի 22-ը հայտարարագիր ներկայացնելու ժամանակ կա, սակայն այս արձանագրմամբ, Գրիգորյանի կինը դժվար թե հայտարարագիր ներկայացնի:

Սա էլ այն կոռուպցիան է, որը փորձում է թաքցնել իշխանությունը. սակայն, «ցավոք», լրատվական համայնքը նման հարցերը ծածուկ չի թողնի:

Փորձեցինք Նարեկ Գրիգորյանից մեկնաբանություն ստանալ՝ ո՞րն է պատճառը, որ կինը տարիներ շարունակ հայտարարագիր չի ներկայացրել: Մեր զանգերը մնացին անպատասխան. համարն անհասանելի էր, ինչպես այս օրերին գրեթե բոլոր ՔՊ-ական պատգամավորների դեպքում է:



Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը Հայաստանում սեփականություն չունի. նա բնակվում է կացարանում: Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ Սրբազանի նախաձեռնած շարժման առաջին իսկ օրվանից իշխանությունն ամբողջ ռեսուրսներով լծվել է շարժման անդամների, մասնավորապես՝ Բագրատ Սրբազանի հասցեին տարատեսակ սուտ տեղեկություններ տարածելու գործին: Մեկ ասացին, թե կուսակրոն քահանա Բագրատ արքեպիսկոպոսի երկու որդիները չեն ծառայել բանակում, այն դեպքում, երբ նա որդիներ չունի: Օրերս էլ ՔՊ-ի կողմից հրապարակ նետվեց տեղեկություն՝ Բագրատ արքեպիսկոպս Գալստանյանը Lexus LX 570 մեքենա է վարում, որի շուկայական արժեքը տատանվում է 40 հազարից 65 հազար դոլարի միջեւ: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Տավուշի թեմի լրատվության պատասխանատու Լիդիա Մանթաշյանը, պատասխանելով հարցին, թե ինչ ավտոմեքենա է վարում Սրբազանը եւ ինչ միջոցներով է գնել, ասաց. «Դա 2008 թվականի մեքենա է, այնպես չէ, թե նոր, թարմ ավտոմեքենա է: Բագրատ Սրբազանը՝ որպես Տավուշի թեմի առաջնորդ, մշտապես իր խնամքի տակ է պահել դիրքերը պահող տղաներին եւ զորամասը: Նոր տարուն նույնիսկ մշտապես բարձրանում էր դիրքեր, զորամասեր ու տղաների հետ էր նշում Ամանորը: Եվ տարիներ առաջ՝ 2017 թվականին, երբ Բագրատ Գալստանյանը Կարո Առաքելյանի հետ հերթական անգամ գնացել է զինվորների Զատկի տոնը շնորհավորելու, դրանից հետո, Կարո Առաքելյանը Սրբազանին մեքենա է նվիրել»: Ավելին՝ ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների՝ Բագրատ Սրբազանն առհասարակ Հայաստանում տուն կամ այլ անշարժ գույք չունի: Մեզ հետ զրույցում Տավուշի թեմի առաջնորդարանից ասացին, որ Բագրատ Սրբազանը Մայր աթոռում իր համար հատկացված կացարան ունի, որտեղ բնակվում է. իսկ այս օրերին Երեւանում վագոն-տնակում կամ հյուրանոցում է գիշերում:



Մինչ հանրապետությունում քաղաքացիները, Բագրատ Սրբազանի գլխավորությամբ, «Տավուշը հանուն հայրենիքի» ակցիայի ամենօրյա պայքարի մեջ են, քննարկվում է մեր երկրի վաղվա գոյության հարցը, Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը քաղաքապետարանի շենք մտնելու հարցն է դատարանում վիճարկում: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ մայիսի 13-ին Երեւանի նախկին քաղաքապետ, «Նոր ուժ» կուսակցության ղեկավար Հայկ Մարությանը դատի է տվել Երեւանի քաղաքապետարանին եւ ներքին գործերի նախարարությանը: Ըստ մեր տեղեկությունների՝ Հայկ Մարությանը պահանջում է, որ դատարանը 09.10.2023 թվականի թիվ 3179-Ա, ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՊՊԳՎ ԿՕ եւ ՀՋՊ գնդի 09.10.2023 թվականի թիվ 63-Ա համատեղ հրամաններն անվավեր ճանաչի եւ հայցվորի՝ Երեւանի քաղաքապետարան մուտք գործելու արգելանքը վերացնի: Հիշեցնենք, որ մարտի 12-ին Երեւանի քաղաքապետարանի շենքի դիմաց հավաքվել էին մեծ թվով քաղաքացիներ, որոնք դեմ էին տրանսպորտը թանկացնելուն: Նրանց թվում էր նաեւ Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը, որին թույլ չէին տվել մուտք գործել շենք: Գործը մակագրվել է դատավոր Հերմինե Մուրադյանին:



Հակակառուպցիոն դատարանում դեռ շարունակվում է Արցախի «Եղնիկներ» զորամասի հրամանատար, Արցախի հերոս Կարեն Ջալավյանի՝ Քյոխի հարցաքննությունը: ՀՀ Հակակառուպցիոն դատարանը վերջինիս արդեն երրորդ անգամ է հրավիրում հարցաքննության՝ ՊԲ նախկին հրամանատար Միքայել Արզումանյանի դեմ հարուցված քրեական գործի շրջանակում: Նշենք, որ այդ գործը քննվում է դռնփակ դատական նիստի շրջանակներում: Հիշեցնենք՝ 2022 թվականի սեպտեմբերի 1-ին դատախազությունը հայտարարեց, որ Արցախի ՊԲ նախկին հրամանատար, Արցախի նախագահի խորհրդական Միքայել Արզումանյանին մեղադրանք է ներկայացվել՝ 2020 թվականի Արցախյան պատերազմի ընթացքում ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող «Արեգա» բարձունքը եւ հարակից մարտական դիրքերն ազատագրած անձնակազմին «նահանջ» հրաման տալու համար: Արզումանյանը կալանավորվել է սեպտեմբերի 1-ին եւ մինչ օրս գտնվում է կալանքի տակ:

ԶՐՈՒՅՑ

«ՇԱՐԺՈՒՄԸ ՃՆՇԵԼ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆԱԼՈՒ»

Բագրատ Սրբազանի առաջնորդած երթի ժամանակ ArmLur.am-ը զրուցել է «Հայաքվե» նախաձեռնության անդամ Մենուա Սողոմոնյանի հետ:

-Պարոն Սողոմոնյան, տեսնում ենք, որ ոստիկանությունը, գնալով, ավելի բիրտ ուժ է կիրառում, ավելի է կոպտացնում իր գործողությունները, անգամ կանանց, տարեցների ու երեխաների նկատմամբ է այդ ուժը կիրառում: Բերման են ենթարկվում անգամ պատգամավորներ եւ քաղաքական գործիչներ: Այս ամենին ի՞նչ գնահատական կտաք, քանի որ օրեր առաջ նաեւ Ձեզ էին բերման ենթարկել:

-Դա ցույց է տալիս, որ ռեժիմը, այսպես կոչված, խուճապի մեջ է: Վարչախումբը վախեցած ու ահաբեկված է, եւ իր բոլոր լծակները գործադրում է: Այսօր ցուցարարների երրորդ պիկապն են տարել տուգանային հրապարակ՝ տեխզննման եւ նմանատիպ ինչ-որ պատրվակներով: Պետք է իրավապահ մարմիններին, ոստիկանությանը դիմենք, միշտ հիշեցնենք՝ սրանք գնալու են, դո՛ւք մնալու եք. մի՛ արեք քայլեր, որ հետո իրար աչքերի մեջ նայել չկարողանանք: Դուք պետական իշխանության ներկայացուցիչներ եք, քաղաքական իշխանության ներկայացուցիչներ, ապօրինի գործողություններից զե՛րծ մնացեք:

Ի դեպ, ասեմ, որ մենք հանցագործության մասին հաղորդում ենք ներկայացրել դատախազություն՝ ոստիկանության այն աշխատակիցների դեմ, որոնք Կիրանցում բռնություն էին գործադրել մարդկանց նկատմամբ. այժմ հարուցվել են քրեական գործեր:

-Այսինքն՝ խոսքը բացառապես Կիրանցո՞ւմ տեղի ունեցած բռնությունների մասին է:

-Այո՛, դեռ այն ժամանակ, երբ բռնի գործողությունների էին իրականացնում քաղաքացիների նկատմամբ, հաղորդում էինք տվել, թե ինչո՞ւ սայլը տեղից չի շարժվում: Չէ՞ որ այդ ամենը նկարահանված է, կա, բայց գործեր չեն հարուցվում:

Այս ամենը, ինչ տեղի է ունենում, ցույց է տալիս, որ ժողովրդական շարժման աճին զուգընթաց, ռեժիմի վախերը շատանում են, եւ նա փորձում է «ոստիկանապետության» բոլոր մեթոդներով ճնշել շարժումը, բայց դա, բնականաբար, չի ստացվելու: Այստեղ հավաքված մարդիկ զոհվածների ծնողներ են, որոնք իրենց ամենաթանկն են նվիրել հայրենիքի համար, մարդիկ են, որոնք ունեն քաղաքացիական, իրավական բարձր գիտակցություն, եւ ճնշումներով, քաշքշելով կամ խփելով, անգամ՝ ձերբակալելով ու մեկուսացնելով, չի կարող այս շարժումը մարել: Նման մանր երեւույթների ազդեցությունը չի կարող խանգարել մարդկանց:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 207

«ՁԵԶ ԿԵՂԵՔԵԼ ԵՆ, ՉԵՆ ԹՈՂԵԼ ԿՐԹՎԵՔ»

12.06.2021 թվականի նախընտրական քարոզարշավի ժամանակ Սեւան քաղաքում Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Ինչո՞վ է կեղեքող էլիտան աղահովել իր երկարաժամկետ իշխանությունը՝ առաջին հերթին ժողովրդին, զանգվածներին, զրկելով դպրոցական կրթությունից:

Էլիտայի ներկայացուցիչները իրենց երեխաներին ուղարկում էին էլիտար դպրոցներ, իսկ մեր ժողովրդի երեխաներին ուղարկում էին, այսպես ասած, ժողովրդական դպրոցներ՝ անգրագետ դառնալու: (Ի դեպ, Նիկոլ Փաշինյանի երեք զավակները սովորել են էլիտար դպրոց համարվող «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում, աղջիկն էլ այս պահին՝ Գերմանիայում խմբ.): 2019 թվականին մի հետազոտության արդյունքում պարզվեց, որ մինչեւ 10 տարեկան երեխաների 30 տոկոսն անգրագետ է, կարդալ չգիտի: Նրանք ոչ թե ուղղակի անգրագիտություն էին տարածում, նրանք այս միջոցով հպատակներ էին պատրաստում իրենց համար: Պետք է կեղեքող այս էլիտան փոխարինվի առաջնորդող էլիտայով»:

«Ժողովուրդ» օրաթերթը այս խոսքերից հետո հարկ է համարում հիշեցնել, որ 24.01.2024թ., ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն ԱԺ ամբիոնից հայտարարեց. «Համաձայն վերջին մարդահամարի տվյալների՝ 15-19 տարեկան երիտասարդների 20, 6 տոկոսը չի սովորում որեւէ կրթական ծրագրով: Վիճակն առավել մտահոգիչ է 20-ից 24 տարեկան երիտասարդների մասով. այս տարիքային խումբը, ներառյալ՝ չսովորող երիտասարդների համամասնությունը դառնում է 68,8 տոկոս՝ ավելի քան 140 հազար մարդ»: Նախարարը սա համարեց անթույլատրելի շեմ: Այլ կերպ ասած՝ Նիկոլ Փաշինյանի թեզերը սուտ էին, եւ նա խաբել է:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ՝ «ՀԱՅԱՔՎԵ»-ԻՑ

Տավուշի մարզի սահմանագծումն ու սահմանազատումն ընդհանրապես օրենքից դուրս է: Այս մասին երեկ՝ մայիսի 14-ին, Դատախազության բակում լրագրողների հետ զրույցում ասաց «Հայաքվե» նախաձեռնության համակարգող Ավետիք Չալաբյանը:

Նա նշեց, որ այսօր հանցագործության մասին հաղորդում են ներկայացնելու բուն սահմանազատման գործընթացի վերաբերյալ. «Սահմանազատումը եւս օրենքից դուրս է, քանի որ մեր ներպետական գործընթացները նախատեսում են, որ ՀՀ սահմանը կարող է որոշվել միայն միջազգային պայմանագրի հիման վրա: Եթե միջազգային պայմանագիրը կքնվում է, այնուհետեւ ՍԴ-ի կողմից պետք է հաստատվի, ապա վավերացվի Ազգային ժողովի կողմից. բայց Սահմանադրության 205-րդ հոդվածը պահանջում է, որ այն միջազգային պայմանագրերը, որոնք վերաբերում են ՀՀ տարածքին, նաեւ ընդունվեն համաժողովրդական հանրաքվեի միջոցով: Այսինքն, եթե որեւէ տեղ ՀՀ սահման է որոշվում, ապա այդ փաստաթուղթը, որով այդ սահմանը որոշվել է, ունի միջազգային պայմանագրի կարգավիճակ եւ այն պետք է անցնի բոլոր ներպետական գործընթացները»:

Ավետիք Չալաբյանն ասաց, որ սակայն որեւէ ներպետական գործընթացով այդ պայմանագիրը չի անցել: Նա շեշտեց, որ ՀՀ քաղաքացին բացառիկ իրավունք ունի որոշելու, թե որն է տարածքի սահմանը. «Եթե տարածքից նույնիսկ 1 մետր պակասում է, իսկ տվյալ դեպքում Կիրանցում ամբողջ բռնությունն ու կոնֆլիկտը պայմանավորված է նրանով, որ գյուղի մի մասը հանձնվում է Ադրբեջանին: Որեւէ կերպ չի կարելի, որ որեւէ պաշտոնատար անձ իր վրա վերցնի այդպիսի լիազորություն, որը կհամարվի լիազորությունների անցում: Եթե կազմակերպված խմբի միջոցով է արվել, նաեւ էական վնաս է հասցվել, ապա դա ծանրացուցիչ հանգամանք է, որը սահմանում է 4-5 տարի ազատազրկում»:

Նա ասաց, որ իրենք այժմ հանցագործության մասին հաղորդում են ներկայացնելու եւ հետամուտ են լինելու, որ քրեական վարույթ նախաձեռնեն:

Չալաբյանի խոսքով՝ քանի դեռ չկա միջպետական պայմանագիր, որով հաստատվում է որոշակի խաղաղություն ու համակեցության կանոններ երկու երկրների միջեւ, հնարավոր չէ սահմանազատում ու սահմանագծում իրականացնել:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀՐԱԴԱԴԱՐԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՓԱԿՈՒՂՈՒՄ



Գազայի հատվածում հրադադարի մասին բանակցությունները փակուղի են մտել Ռաֆահում իսրայելական գործողության պատճառով, որտեղ ապաստանել է հարկադրյալ տեղահանվածների մեծ մասը: Այս մասին հայտնել է Կատարի կառավարության ղեկավար, արտաքին գործերի նախարար, շեյխ Մուհամեդ բեն Աբդել Ռահման Ալ Թանին, որը միջնորդ է Իսրայելի եւ ՀԱՄԱՍ-ի միջեւ բանակցություններում:

«Վերջին մի քանի շաբաթներին մենք որոշակի ազդակ ենք տեսել, բայց բանակցային գործընթացը, ցավոք, անհրաժեշտ ուղղությամբ չի ընթացել: Հիմա մենք գտնվում ենք գրեթե լիակատար փակուղային վիճակում: Իհարկե, այն, ինչ տեղի ունեցավ Ռաֆահում, մեզ հետ նետեց համաձայնագրի ուղղությամբ տարվող աշխատանքից». - ասել է վարչապետը Դոհայի տնտեսական համաժողովում: Նրա ելույթը հեռարձակել է Bloomberg հեռուստալիքը:

Նա նաեւ ընդգծել է, որ միջնորդները չեն կարող ապահովել հրադադարի համաձայնագիրը դիրքորոշումների «հիմնարար տարբերությունների» պատճառով, որոնք ունեն հակամարտող կողմերը: «Մի կողմը ցանկանում է ավարտել պատերազմը, հետո խոսում է պատանդների մասին: Մյուս կողմը փորձում է ազատել պատանդներին եւ շարունակել պատերազմը. քանի դեռ այս տարբերությունները շփման կետեր չեն ունենա, մենք որեւէ արդյունքի չենք հասնի». - ավելացրել է Կատարի վարչապետը:

ՍՐԲԱԶԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ Ա. ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը, ինչպես հայտնի է, երեկ Բագրատ Սրբազանի գլխավորած շարժմանը միացած դիվանագետներին «դասալիք» է անվանել: Սրբազանը լրագրողների հետ զրույցում արձագանքեց վերոնշյալին:

«Դիվանագիտության մասին, որ խոսում են, թող հիշեն 2023 թվականի սեպտեմբերին ՄԱԿ-ում տեղի ունեցող անվտանգության խորհրդի նիստը, որտեղ, երբ Արարատ Միրզոյանը մի բան ասում էր, Բայրամովն իրեն հերքում էր Միրզոյանի վարչապետի խոսքերով: Հայաստանի պատմության մեջ երբեւէ այդպիսի խայտառակ դրվագ չի եղել, երբ նմանատիպ կարեւոր մարմնի ամբիոնում այդպիսի բան են մերժում եւ հերքում՝ սեփական երկրիդ ղեկավարի կողմից ասվածին հղումներ կատարելով». - ասաց Բագրատ Սրբազանը:

KOMMERCANTЪ-Ի ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

«ՏԱՎՈՒՇԸ ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ» ՇԱՐԺՈՒՄ

«Երեւանում անհնազանդության բողոքի ցույցեր են տեղի ունենում. ոմանք համաձայն չեն Ադրբեջանի հետ սահմանազատման կառավարության ծրագրերի հետ, փակում են փողոցները, իսկ ոստիկանությունը բերման է ենթարկում նրանց»: Այս մասին գրել է KOMMERCANTЪ դարբերականը՝ նշելով, որ «Հայաստանի ընդդիմությունը հույսը դրել է լավագույնի վրա եւ վարչապետ Նիկոլ Փաշինյանին փորձում են հաղթել Ասծո օգնությամբ»:

«Բողոքի ակցիաները, որոնց առաջնորդն ու ոգեշնչողը Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանն է, շարունակվում են ապրիլից եւ տարբերվում են մյուս բողոքի ակցիաներից նրանով, որ այս անգամ իշխանությունների հակառակորդը հոգեւորականն է: Երկրի ղեկավարությունը, սակայն, անտեսում է ցուցարարների պահանջները, այդ թվում՝ կառավարության ղեկավար Նիկոլ Փաշինյանի հրաժարականը: Եվ առայժմ նրանք որեւէ հետեւանքների չեն բախվում», - ասվում է հոդվածում:

Հոդվածագիր Վլադիմիր Սոլովյովը հիշեցնում է, որ անհնազանդության ակցիաները տեղի են ունենում «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման առաջնորդ, Հայ առաքելական եկեղեցու Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ Գալստանյանի կոչով:

«Նա դարձել է անցյալ ամիս սկսված Ադրբեջանի հետ սահմանազատման դեմ բողոքի շարժման դեմքն ու առաջնորդը: Արքեպիսկոպոսն անմիջապես աջակցել է Տավուշի մարզում ճանապարհների փակմամբ սկսված բողոքի շարժմանը: Ցուցարարներն իրենց դժգոհությունն են հայտնել Հայաստանի կողմից այս շրջանի չորս գյուղն Ադրբեջանին հանձնելու վերաբերյալ: Երբ պարզ դարձավ, որ այս գործողությունները ոչ մի արդյունք չունեն, արքեպիսկոպոսն առաջնորդեց ոտքով երթը Տավուշի մարզից դեպի Երեւան: Մայիսի 9-ին, երբ երթը հասավ մայրաքաղաք, Հանրապետության հրապարակում՝ կառավարության դիմաց, տպավորիչ բազմություն էր հավաքվել: Նման մասշտաբի բողոքի ակցիաներ Երեւանը հազվադեպ է տեսել 2018 թվականի գարնանը փողոցային ցույցերի շնորհիվ իշխանության եկած Նիկոլ Փաշինյանի կառավարման վեց տարվա ընթացքում: Սա այն դեպքում, երբ Փաշինյանի հրաժարականին հասնելու փորձեր են արվել 2020 թվականին՝ Ղարաբաղյան պատերազմում պարտությունից հետո, 2021 թվականին, 2023 թվականի աշնանը, երբ Բաքուն վերահսկողության տակ առավ ողջ Ղարաբաղը, եւ ողջ հայությունը հեռացավ այնտեղից:

Մինչ այժմ Նիկոլ Փաշինյանի դեմ գործողություններ էին կազմակերպում քաղաքական գործիչները, որոնց թվում շատ էին նախկին պաշտոնյաները: Ներկայիս բողոքը յուրահատուկ է նրանով, որ այն ղեկավարում է եկեղեցու սպասավորը: Սրանով են փորձագետները բացատրում բողոքի զանգվածային մասշտաբը». - գրում է հեղինակը:

«Եկեղեցին դարձել է բողոքի ավանգարդը: Նրա նկատմամբ վստահության տոկոսը մնում է բարձր». - KOMMERCANTЪ-ին տված հարցազրույցում ասել է Հայաստանի կիրառական քաղաքական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող Սերգեյ Մելքոնյանը:

Ըստ նրա՝ մարդիկ, ի դեմս եկեղեցու, տեսել են այդ երրորդ ուժը:

«Քաղաքական գործիչներից ոչ ոք չէր կարող դա անել, բայց այստեղ երրորդ ուժը պարզվեց, որ Եկեղեցին է: Եվ սա այն ուժը չէ, որն իրեն հակադրում է ռեժիմին կամ ընդդիմությանը: Հիմնական մեսիջն է՝ վերջ տանք պառակտմանը». - նշել է փորձագետը:

«Այն պառակտումը, որի մասին խոսում է փորձագետը, Հայաստանում առաջացել է Նիկոլ Փաշինյանի իշխանության գալուց հետո. գրեթե անմիջապես նրան սկսել են դիմակայել Հայաստանում «նախկիններ» կոչվողները: Նրանց թվում են նախկին նախագահներ Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը. բայց փաստն այն է, որ շատերը չեն ցանկանում եւ նույնիսկ վախենում են նրանց վերադարձից: Սրա պատճառով Նիկոլ Փաշինյանի համար խնդիրներ ստեղծելու նրանց փորձերը մեկ անգամ չէ, որ ձախողվել են», - նշում է հոդվածագիրը:

Ժողովրդավարության եւ անվտանգության Երեւանի տարածքային կենտրոնի ղեկավար Տիգրան Գրիգորյանը նշում է, որ Բագրատ Գալստանյանին հաջողվել է հավաքել Արցախյան երկրորդ պատերազմի ավարտից ի վեր ամենամեծ հանրահավաքը:

Բայց նա նշում է. «Ընդդիմության համար գլխավոր խնդիրն այն է, որ առաջին հանրահավաքներից հետո հասարակության հետագա մոբիլիզացիա չկա»:

Այն, որ բողոքի ակցիայի գլխին քահանան է, Տիգրան Գրիգորյանի կարծիքով, «ընդդիմության ձախողման ցուցիչ է»:

«Ընդդիմությունը հասկանում է, որ չի կարող աջակցություն ստանալ, եւ Եկեղեցին ներագրավված է սրանում: Սա վկայում է, որ խորհրդարանական ընդդիմության հեռանկարներն այնքան էլ լավ չեն»,- ամփոփել է փորձագետը:

«Հատկանշական է նաեւ այն, որ Նիկոլ Փաշինյանը երկուշաբթի մեկնել է Դանիա, որտեղ մայիսի 15-ին մասնակցելու է «Կոպենհագենյան ժողովրդավարության գագաթնաժողովին»: Այսպիսով, Հայաստանի վարչապետը ցույց է տալիս, որ ամեն ինչ վերահսկողության տակ է եւ չի վախենում մի քանի օրով լքել երկիրը, որի մայրաքաղաքում ցուցարարները պահանջում են նրա հրաժարականը», - եզրափակել է հեղինակը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐԻՆ Ի ՊԱՏԱՍԽԱՆ

Սոցիալական ցանցերի որոշ օգտատերեր կեղծ եւ մանիպուլատիվ բնույթի տեղեկություններ են շրջանառում ՀՀ պաշտպանության նախարարի 1-ին տեղակալ, ԶՈՒ ԳՇ պետ, գեներալ-լեյտենանտ Էդվարդ Ասրյանի՝ ՌԴ քաղաքացի լինելու վերաբերյալ: Անհարկի շահարկումներ են նաեւ նրա ընտանիքի անդամների՝ միայն ՌԴ քաղաքացի լինելու մասին լուրերը: Այս մասին հերքում է տարածել ՀՀ ՊՆ-ն:

«ԶՈՒ ԳՇ պետ Էդվարդ Ասրյանը բացառապես ՀՀ քաղաքացի է, իսկ նրա կինը՝ ազգությամբ ռուս. ուստի երեխաները, ծննդյան բերումով, երկքաղաքացի են: ԳՇ պետի կինն ու երեխաները ոչ միայն ունեն ՀՀ քաղաքացիություն, այլեւ 2006 թվականից մշտապես բնակվում են Հայաստանի Հանրապետությունում:

ԳՇ պետի որդին զինապարտ է եւ ներգրավված է ՀՀ ԶՈՒ 2024 թվականի զորակոչային միջոցառումներին»,- նշված է հաղորդագրության մեջ:

ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ ԽՈՍՔ ՉԿԱ

ՌԴ պաշտպանության նախարարության ղեկավարի պաշտոնի թեկնածու Անդրեյ Բելոուսովը հայտնել է, որ սկսել է ծանոթանալ նախարարության գործերին: Նա իր պաշտոնում առաջնահերթ խնդիրներն է անվանել հատուկ ռազմական գործողության գոտում զենքի մատակարարումն ու բանակային խմբերի համալրումը:

Միաժամանակ, ըստ նրա, մոբիլիզացիայի մասին խոսք չկա: Այս մասին հայտնում է kommersant.ru-ն:

«Կոնկրետ ուզում եմ լրագրողների համար շեշտել, որ խոսքը մոբիլիզացիայի, ինչ-որ արտակարգ միջոցառումների մասին չէ, խոսքը պլանավորված միջոցառումների մասին է:

Բայց, այնուամենայնիվ, այս գործընթացն արդեն մեկնարկել է՝ եւ քաղաքացիների զորակոչը, եւ հատկապես կարեւոր է պայմանագրերը կնքելը». - ընդգծել է նա Դաշնության խորհրդում ելույթի ժամանակ:

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ «ՓԼՈՒԶՎՈՒՄ» ԵՆ

Երեկ ՀՀ ոստիկանության կոմիտեի Երեւան քաղաքի ոստիկանության վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ոստիկանության երկրորդ բաժնում ենթադրություն է իրականացվել՝ մայրաքաղաքում իրականացվող բողոքի ակցիաների մասնակիցներից մեկի կողմից ադօրինի կերպով սառը զենք պահելու եւ կրելու դեպքի բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ:

2024 թվականի մայիսի 11-ին՝ ժամը 18:20-ին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության կենտրոնական բաժնի ՀՈԲ ծառայողների կողմից Երեւան քաղաքի Արամ-Բուզանդ փողոցների միջնամասում գտնվող «Խաչքարերի պուրակ» կոչվող հատվածից սառը զենք պահելու եւ կրելու հիմնավոր կասկածով ձերբակալվել է բողոքի ակցիայի մասնակիցներից մեկը, ում մոտից հայտնաբերվել է 60 սմ երկարությամբ պատյանով սուր:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, որի նախաքննությամբ պարզվել է, որ բողոքի ակցիայի հիշյալ մասնակիցը, 3 օր մասնակցելով Երեւան քաղաքի Հանրապետության Հրապարակում կազմակերպված հավաքներին, կրել է երկարաշեղբ սառը զենք հանդիսացող սուր:

Վերջինիս նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է հանրային քրեական հետապնդում:

Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է. ու մինչ իրավապահները կպարզեն, թե սուրը ինչ նպատակով է եղել քաղաքացու մոտ, մեկ այլ գործով ուշագրավ վիճակ է:

2024թ. մայիսի 7-ին հաղորդում է ստացվել այն մասին, որ Tik Tok սոցիալական ցանցում առկա է «Տավուշը հանուն հայրենիքի» քաղաքացիական շարժման երթի մասնակցի կողմից հրապարակված խոսակցության տեսաձայնագրություն՝ «Հավաքվելու ենք, կարողա թաքուն զենք էլ բերենք» բովանդակությամբ, որտեղ երկու անձինք զրուցում են վերոնշյալ շարժման բողոքի ակցիաներին իրենց մասնակցության, դրան գաղտնի կերպով զենք բերելու եւ հրապարակային կերպով այդ մասին չխոսելու վերաբերյալ:

Դեպքի առթիվ 2024թ. մայիսի 7-ին ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչությունում, ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նախաքննության շրջանակներում զննության է ենթարկվել նշված տեսագրությունը: Քննությամբ պարզվել է, որ նշված խոսակցությունը եւ դրա վերաբերյալ TikTok հավելվածում գրանցված օգտատիրոջ էջում առկա տեսագրությունը հրապարակվել է մայիսի 6-ին:

Տվյալներ են ստացվել՝ մի խումբ անձանց կողմից ադօրինի կերպով զենք-զինամթերք ձեռք բերելու եւ պահելու վերաբերյալ:

Նշված հանցանքը կատարելու անմիջական ծագած կասկածի հիմքով երկու անձ ձերբակալվել է: Կատարվում են անհրաժեշտ քննչական, վարութային, ինչպես նաեւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Եվ ահա, ըստ մեզ հասած տեղեկությունների՝ իրավապահները վերոնշյալ անձանց նկատմամբ որեւէ քրեական գործ չեն հարուցել եւ նրանց ազատ են արձակել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է՝ ⇨ ԶԵՆՔ ՊԱՀԵԼՈՒ ԿԱՍԿԱԾԱՆՔՈՎ

Գյումրի քաղաքի Մուշի բաժնի համայնքային ոստիկանները մայիսի 13-ի գիշերն իրականացրած ուժեղացված ծառայության ընթացքում Մուշ-2 թաղամասում ստուգման նպատակով մոտեցել են կայանված «Ալֆա Ռոմեո» մեքենային: Հրազդան քաղաքի բնակիչ 39-ամյա վարորդը մեքենայի սրահից ոստիկաններին է ներկայացրել «Մակարով» տիպի ատրճանակ՝ լիցքավորված 5 փամփուշտով: Նա, ադօրինի կերպով զենք-զինամթերք պահելու եւ կրելու հիմնավոր կասկածանքով, ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Մուշի բաժին:

39-ամյա տղամարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Շիրակի մարզային քննչական վարչություն: Հանգամանքները պարզվում են:



ԱՊՕՐԻՆԻ ԿԱԼԱՆՔԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է

Օկուպացված Արցախի Հանրապետության նախկին նախագահ Արկադի Ղուկասյանի ապօրինի կալանքի ժամկետը երկարաձգվել է. այս մասին հայտնում են ադրբեջանական լրատվամիջոցները:

Նշվում է, որ Բինագադիի շրջանային դատարանը քննարկել է Ղուկասյանի կալանքը երկարացնելու մասին դատախազի միջնորդությունը, որն առաջարկվում է Ղուկասյանի կալանքը երկարաձգել եւս մի քանի ամսով՝ նախաքննության միջոցառումների շարունակման կապակցությամբ:

Դատարանը բավարարել է միջնորդությունը, եւ Ղուկասյանի կալանքը երկարացվել է եւս հինգ ամսով:

Հիշեցնենք, որ ԱՀ նախկին նախագահը ձերբակալվել էր Արցախում այս տարվա սեպտեմբերին, ինչից հետո նրան տեղափոխել էին Բաքվի բանտ:

ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

ԼՐԱԳՐՈՂԻՆ ՎՐԱԵՐԹԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԳՈՐԾԸ

2024 թվականի մայիսի 14-ին՝ ժամը 10:50-ին, բժշկական կենտրոնից հաղորդում է ստացվել այն մասին, որ Երեւան քաղաքի Խ. Աբովյան փողոցում, վրաերթի ենթարկվելու հետեւանքով, իրենց մոտ բուժօգնության է դիմել Նարե Գեւորգյանը:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ ՃՏՀ քննության բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Քրեական վարույթի նախաքննությամբ նախնական տվյալներ են ստացվել այն մասին, որ տուժած անձը հանդիսանում է մայրաքաղաքում անցկացվող ակցիաները լուսաբանող, Mediahub.am կայքի լրագրող Նարե Գեւորգյանը, իսկ պատահարը տեղի է ունեցել, նախնական տվյալներով, ոստիկանական «Գազել» մակնիշի ավտոմեքենայով ոստիկանության ծառայողների կողմից նշված ճանապարհահատվածում հատուկ ծառայություն իրականացնելիս:

Տվյալներ են ստացվել այն մասին, որ դեպքի պահին նշված տրանսպորտային միջոցի առկայծող կապույտ եւ կարմիր փարոսիկները եւ հատուկ ձայնային ազդանշանը միացված են եղել: Քրեական վարույթով նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

ԿՐԱԿՈՑՆԵՐ՝ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ

Մայիսի 11-ին՝ ժամը 19:15-ի սահմաններում, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Մասիսում վիճաբանություն է տեղի ունեցել, որի ժամանակ հնչել են կրակոցներ: Մասիս են ժամանել ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության ծառայողները ու տեղում պարզվել, որ տեղեկությունը հավաստի է:

Ոստիկանների ու քննիչների ձեռնարկված օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ «ՎԱԶ 2112» ավտոմեքենայի վարորդը Արագածոտնի մարզի բնակիչ 22-ամյա Տիգրան Մ.-ն է, «Opel»-ի վարորդը՝ Արագածոտնի մարզի բնակիչ 26-ամյա Հրանտ Գ.-ն, եւ ուղեւորները, որոնք մայիսի 11-ին՝ ժամը 19:10-ի սահմաններում, Մասիս քաղաքի Հերացու փ. 26/1 հասցեի դիմաց անձնական հարցի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ փայտերով եւ մահակներով հարվածներ են հասցրել Chevrolet Volt մակնիշի ավտոմեքենայի վարորդ, Արարատի մարզի բնակիչ 28-ամյա Շավարշ Դ.-ին, որն էլ իր մոտ եղած ատրճանակից կրակոցներ է արձակել: Դեպքի վայրի զննությամբ փորձագետի կողմից հայտնաբերվել է 9 մմ տրամաչափի կրակված մի քանի պարկուճ:

Ոստիկանները մայիսի 12-ին Տիգրան Մ.-ին հայտնաբերել ու ձերբակալել են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 13-ից 14-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 97 դեպք, որից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԻՆՉ ԳՈՐԾ ՈՒՆԵՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՀԱՐՑՈՎ

Տավուշի մարզպետ, ՔՊ կուսակցության վերահսկող հանձնաժողովի նախագահ Հայկ Ղալումյանին հարցում ենք արել. «Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանը ապրիլի 17-ին մասնակցեց վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ ոսկեպարցիների հանդիպմանը, ապրիլի 26-ին Կիրանցում բնակիչների հետ լարված մթնոլորտում կայացած հանդիպմանը ձեզ էր ուղեկցում: Ինչ առաքելություն ուներ Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավարը Կիրանցում, ո՞վ է նրան ներգրավել այդ գործին»: Մարզպետարանից ստացված պատասխանում գրված է. «Հարցի վերաբերյալ առաջարկում ենք դիմել Դիլիջանի համայնքապետարանին»: Կհետեւեի նք մարզպետի խորհրդին, կդիմեինք Դիլիջանի համայնքապետարան, սակայն Դիլիջանի համայնքապետարանը, համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի գլխավորությամբ, խախտելով ՀՀ Սահմանադրության եւ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի պահանջները, չի պատասխանել նախկինում ուղարկած մեր տեղեկատվական հարցումներին:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ ՋՆՋԵԼ ԵՆ

Իջեւան քաղաքի պետական բուժհիմնարկների մի շարք աշխատողներ, որոնք ֆեյսբուքյան իրենց էջում տարբեր միջոցառումներից՝ հայ առաքելական եկեղեցու Տավուշի թեմի առաջնորդ, «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման նախաձեռնող եւ ղեկավար Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի բազում լուսանկարներ ունեին, շտապ ջնջել են այդ լուսանկարները: Հայտնի չէ՝ նրանց ստիպե՞լ են ջնջել Սրբազանի լուսանկարները, թե՞ իրենք են աշխատանքը կորցնելու վախից դրանք ջնջել: Մարզի բուժհիմնարկները գտնվում են Տավուշի մարզպետարանի անմիջական ենթակայության ներքո:

ԴԱՍԱԴՈՒԼ ՉԻ ԵՂԵԼ

«Ազգային ճակատը» լուր է տարածել, որ մայիսի 13-ին Նոյեմբերյանի պետական քոլեջում դասադուլ է եղել՝այդ լուրի հետ ներկայացնելով դրսում գտնվող ուսանողների լուսանկար: Մայիսի 14-ին զանգահարեցինք Նոյեմբերյանի պետական քոլեջի տնօրեն Կարեն Նազարյանին: Նա հայտնեց, որ Նոյեմբերյանի քոլեջում այդ օրը դասադուլ չի եղել: Տնօրենն ասաց, որ քոլեջում ներկայումս այն ժամանակաշրջանն է, երբ ուսանողների 70 տոկոսը մասնակցում է ուսումնական պրակտիկայի, Նոյեմբերյանի պետական քոլեջում դասադուլի մասին վկայող լուսանկարն արվել է այն ժամանակ, երբ կուրսերից մեկի ուսանողներն ուսումնական պրակտիկայի են դուրս եկել: Կ. Նազարյանն ասաց, որ ուսումնական պրակտիկայի չմասնակցած կուրսերից զատ՝ մնացած կուրսերը բնականոն կերպով դասեր են արել, դասադուլ չի եղել: Մայիսի 14-ին էլ Նոյեմբերյանի պետական քոլեջում դասադուլ չկար:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ԱՎՐՈՐԱ 2025»

ՍԿՍՎԱԾ Է ԱՌԱՋԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՓՈՒԼԸ

2025 թ. «Ավրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակի առաջադրումների փուլն սկսված է: «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության այս համաշխարհային մրցանակը բացահայտում է եւ աջակցում մեր օրյա հերոսներին, որոնք շոշափելի դրական փոփոխություններ են իրականացնում այն համայնքներում, որտեղ ամենաշատը կա դրա կարիքը:

«Ինձ մեծ ուրախություն է պատճառում առաջադրումների նոր փուլի մեկնարկը», - ասաց «Ավրորա» մրցանակի ընտրող հանձնաժողովի նախագահ եւ Լոնդոնի կայսերական քոլեջի Գլոբալ առողջապահական նորարարությունների ինստիտուտի համաղեկավար Լորդ Արա Դարզին: «Ընտրող հանձնաժողովի պատվարժան անդամներն ու ես անհամբեր սպասում ենք նոր եւ ոգեշնչող թեկնածուների առաջադրմանը եւ նրանց ազդեցիկ պատմություններին: Ամեն տարի աշխարհի տարբեր անկյուններից մարդիկ առաջադրում են համայնքներում աշխատող հարյուրավոր ակտիվիստների, որոնց արժանի են համարում այս մարդասիրական մրցանակին, իսկ մեզ համար պատիվ է, որ կարող ենք լույս սփռել նրանց ակնառու աշխատանքի վրա»:

Յուրաքանչյուր ոք կարող է առաջադրել մերօրյա հերոսների, որից հետո ստուգվում է նրանց համապատասխանությունն առաջադրման չափանիշներին: Նախնական գնահատումից հետո «Ավրորա» մրցանակի Փորձագետների խորհուրդը կազմում է թեկնածուների կարճ ցուցակ: Ավելի ուշ «Ավրորա» մրցանակի ընտրող հանձնաժողովն ընտրում է «Ավրորայի» հերոսներին, ապա մրցանակի դափնեկրին, որի անունը հայտարարվում է «Ավրորա» մրցանակի շնորհման արարողության ժամանակ:

2024 թ. մայիսի 9-ին Լոս Անջելեսում տեղի ունեցած «Ավրորա» մրցանակի շնորհման արարողության ժամանակ 2024 թ. «Ավրորա» մրցանակի դափնեկիր ճանաչվեց Դենիս Մուկվեգեն՝ կանանց պաշտպանելու եւ սեռական բռնության մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար գործադրած խիզախ ջանքերի համար:

Այսպիսով՝ նա ստացավ նվիրատվության շղթան շարունակելու եզակի հնարավորություն՝1 միլիոն ԱՄՆ դոլար մրցանակն ուղղելով համայնքային ակտիվիստների աջակցությանը, որոնք օգնում են կարիքավոր մարդկանց:

Ստեղծվելով Հայոց ցեղասպանությունը վերապրողների անունից՝ ի երախտագիտություն նրանց փրկողների՝ «Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը ձգտում է լուծել մարդասիրական խնդիրներն աշխարհի տարբեր անկյուններում: Այն արդեն օգնության ձեռք է մեկնել ծայրահեղ կարիքի մեջ գտնվող ավելի քան 3.2 միլիոն մարդու:

«Ավրորա» մարդասիրական նախաձեռնության մասին

Ստեղծվելով Հայոց ցեղասպանությունը վերապրողների անունից՝ ի երախտագիտություն նրանց փրկողների՝ «Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը ձգտում է լուծել մարդասիրական խնդիրներն աշխարհի տարբեր անկյուններում՝ տեղում օգնելով ամենակարիքավորներին: «Ավրորան» էապես բարեփոխել է խիստ կարիքի մեջ գտնվող մարդկանց կյանքը՝ բացահայտելով եւ աջակցելով մարդասեր հերոսներին ու նրանց խիզախ գործունեությունը: «Ավրորան» արդեն նախաձեռնել է եւ աջակցել ավելի քան 427 նախագծի 56 երկրում եւ տարածքում՝ զգալի ազդեցություն գործելով խիստ կարիքի մեջ գտնվող մոտավորապես 3.2 մլն մարդու կյանքում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ԿԱՆՆԻ» 77

ՖԱՌԱՏՈՆԻ ՄԵԿՆԱՐԿԸ՝ ԱՅՍՕՐՎԱՆԻՑ

Ֆրանսիայի Լազուր ափին այսօր՝ մայիսի 14-ին, բացվում է Կաննի միջազգային կինոփառատոնը. կինոստուգատեսի հիմնական մրցույթում այս տարի ներկայացված է քսաներկու ֆիլմ:



Մայիսի 14-ից մինչեւ 25-ը Լազուր ափին կայանալիք ստուգատեսի մեկնարկը կտա Քվենտին Դյուպիեի «Երկրորդ ակտ» ֆրանսիական ժապավենը: Հիմնական մրցույթի ժյուրիի նախագահն այս տարի ամերիկացի ռեժիսոր, սցենարիստ Գրետա Գերվիգն է. նա այնպիսի կինոնկարների հեղինակ է, ինչպիսիք են «Փոքրիկ կանայք», «Լեդի Բյորդ» եւ «Բարբի» ֆիլմերը:

«Կաննիի» 77-րդ կինոփառատոնի հիմնական մրցույթում ներառվել է 22 ֆիլմ:

«Կաննիի» «Ոսկե արմավենու ճյուղին» հավակնում են գրող եւ քաղաքական գործիչ Էդուարդ Լիմոնովի մասին պատմող ֆիլմը, Կիրիլ Սերեբրենիկովի՝ «Բալլադ Էդիչկայի մասին» ֆիլմը, ամերիկացի ռեժիսոր Ֆրենսիս Ֆորդ Կոպպոլայի «Մեգալոպոլիս» գիտաֆանտաստիկ ֆիլմը, հույն ռեժիսոր Յորգոս Լանտիմոսի «Բարության տեսակները» եւ իտալացի ռեժիսոր Պաոլո Սորենտինոյի «Պարտենոպա» ֆիլմերը:

Բացի դրանից, ստուգատեսի հիմնական մրցույթում պայքարելու են Դոնալդ Թրամփի կարիերայի մասին պատմող իրանական ծագումով շվեդ ռեժիսոր Ալ Աբասիի «Աշակերտը» ֆիլմը, Շոն Բեյքերի «Անորա» ֆիլմը, կանադացի ռեժիսոր Դեւիդ Կրոնենբերգի «Պատանքներ» ֆիլմը, ֆրանսիացի ռեժիսոր Քրիստոֆ Օնորեի՝ Մարչելո Մաստրոյանիի մասին պատմող «Իմ Մարչելոն» ֆիլմը եւ այլ կինոնկարներ:

Հիմնական մրցույթում ընդգրկվել են նաեւ շվեդ ռեժիսոր Մանգուս ֆոն Հորնի «Ասեղով աղջիկը» ֆիլմը, բրիտանացի ռեժիսոր Անդրեա Առնոլդի «Թռչունը» կինոնկարը, բրազիլացի ռեժիսոր Կարիմ Այնուզի «Ճակատագրի հյուրանոցը» ֆիլմը, ֆրանսիացի ռեժիսոր Ժակ Օդիարի «Էմիլյա Պերես» ֆիլմը եւ այլ ֆիլմեր:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 7 պատահար. 10 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՎԶԵԲ 33

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Երեւանում երեկվանից՝ մայիսի 14-ից, մեկնարկել է Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) 33-րդ տարեկան հանդիպումը եւ գործարար համաժողովը:

Միջոցառմանն ընդգրկուն կազմով է մասնակցում ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ գերատեսչության ղեկավար Վահե Հովհաննիսյանի գլխավորությամբ: Նախարարության ներկայացուցիչների հանդիպումների շարքը մեկնարկել է նախարար Հովհաննիսյանի եւ ՎԶԵԲ տնօրենների խորհրդի անդամ Յան Վիլեմ վան դեն Ուոլ Բեյքի հանդիպումով:

«Սա շատ լավ առիթ է Հայաստանը ներկայացնելու որպես ներդրումների համար լավ միջավայր, ինչպես նաեւ դիրքավորվելու որպես տեխնոլոգիական ոլորտի տարածաշրջանային առաջատար երկիր», - նշել է Վահե Հովհաննիսյանը:

Համաժողովի առաջին օրը, ինչպես նշվում է ՎԶԵԲ տարածած հաղորդագրությունում, անցկացվում է TUMO Center for Creative Technologies ընկերության եւ Ջացեկ Կուբասի հետ:

Հիմնական ելույթներով հանդես են գալու Նուբար Աֆեյանը եւ Microsoft-ը ներկայացնող Բեն Քրամփթոնը: Զուգահեռ լինելու են քննարկումներ Հարավային Կովկասի դերի, կայուն առեւտրի, էներգետիկայի եւ լոգիստիկայի զարգացման մասին:

«Դվին» համալիրում երեկ ելույթ են ունեցել բարձր մակարդակի խոսնակներ Օդիլ Ռենաուդ-Բասսոն, Ֆրենսիս Մալիջը եւ Ռուդոլֆ Փին:

ՔՀԿ-ի ծրագիրը կարեւոր քննարկում է ունենալու նոր բնապահպանական եւ սոցիալական քաղաքականության ու տեղեկատվական քաղաքականության հասանելիության վերաբերյալ:

ՎԶԵԲ-ի կայունության միջոցառումը կոչված է ցուցադրելու բանկի ուշադրությունը կանաչ աճի եւ կայունության հիմնական ոլորտներում նրա առաջնորդությունը: Սպասվում է ՎԶԵԲ կայունության այս տարվա մրցանակաբաշխությունը:

Համաշխարհային ֆինանսատնտեսական միջավայրում առանցքային իրադարձություններից համարվող այս համաժողովում բարձր մակարդակով երկխոսություն է ծավալվելու ոլորտի արդիական թեմաների շուրջ, կայացվելու են բանկի զարգացման ռազմավարական հարցերի վերաբերյալ որոշումներ:

Երեւանյան համաժողովին սպասվում է շուրջ 2000 պատվիրակի մասնակցություն:

Համաժողովը տեւելու է 3 օր՝ մայիսի 14-ին, 15-ին եւ 16-ին: Այդ ընթացքում կլինեն ելույթներ, պանելային քննարկումներ:

Համաժողովի ընթացքում ելույթ կունենան ամերիկյան «Moderna» ընկերության համահիմնադիր ու գլխավոր տնօրեն, «Ավրորա» մարդասիրական մրցանակաբաշխության համահիմնադիր Նուբար Աֆեյանը, «Միսս Հայաստան» տիտղոսակիր, «Նասդաք»-ի ներկայացուցիչ Կրիստինա Այանյանը եւ այլք:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՊԵԿ-ԻՑ

ՀՀ ՊԵԿ-ը տեղեկացնում է, թե որ դեպքում է հայտարարագրի լրացման ժամանակ ընտրվում «Համաձայն չեմ տեղեկատվության հետ» նշատուփը:

«Համաձայն չեմ տեղեկատվության հետ» նշատուփն ընտրվում է այն դեպքում, երբ հայտարարատուն համաձայն չէ համակարգի կողմից ինքնաշխատ լրացված տեղեկատվության հետ եւ կարող է լրացնել այլ տեղեկատվություն:

Ի՞նչ անել այն դեպքում, երբ ինքնաշխատ լրացված տվյալներում բացակայում է հարկային գործակալի վերաբերյալ տեղեկատվությունը:

Ինքնաշխատ լրացված տեղեկատվությունում հարկային գործակալի (գործատու) վերաբերյալ բացակայող տեղեկատվությունը հայտարարատուն կարող է լրացնել «Ավելացնել գործակալ» կոճակի միջոցով:

Ինչպե՞ս լրացնել բանկային ավանդի տոկոսը:

Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգի առաջին բաժնի երկրորդ գլխում անհրաժեշտ է ավելացնել հարկային գործակալ եւ եկամտի տեսակից ընտրել «Ավանդի տոկոս»: Համակարգը եկամտային հարկը կհաշվարկի ինքնաշխատ:

Ինչպե՞ս լրացնել պարտքային արժեթղթերի տոկոսը:

Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգի առաջին բաժնի երկրորդ գլխում անհրաժեշտ է ավելացնել հարկային գործակալ եւ եկամտի տեսակից ընտրել «պարտքային արժեթղթերի տոկոս»: Եկամտային հարկի գումարը հայտարարատուն պետք է լրացնի ինքնուրույն:

Ինչպե՞ս լրացնել արժեթղթերից ստացվող չհարկվող եկամուտները:

Արժեթղթերից ստացվող այն եկամուտները, որոնք ենթակա չեն հարկման, լրացվում են ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգի երկրորդ բաժնում՝ «Նվազեցվող եկամտի տեսակից» ընտրելով [2.24] տողը՝ «Արժեթղթերից եկամուտներ»:

Ո՞ր տողում է անհրաժեշտ լրացնել սոցիալական փաթեթի տարեկան գումարը:

Եկամտային հարկի եւ սոցիալական վճարի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) երկրորդ բաժնում լրացվում են ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ տվյալ հարկային տարվա ընթացքում ֆիզիկական անձի ստացած նվազեցվող (չհարկվող) եկամուտները: Մասնավորապես, հաշվարկի (հայտարարագրի) երկրորդ բաժնի [2.11] տողում (Անհատույց ստացվող եկամուտներ) լրացվում են ՀՀ պետական մարմինների որոշումների հիման վրա ֆիզիկական անձանց համար (օգտին) կատարված վճարումները:

Արդյո՞ք անհրաժեշտ է հայտարարագրել աշխատողի գործուղման ծախսերի փոխհատուցման համար ստացված գումարները եւ ո՞ր տողում:

Եկամտային հարկի եւ սոցիալական վճարի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) երկրորդ բաժնում լրացվում են ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ տվյալ հարկային տարվա ընթացքում ֆիզիկական անձի ստացած նվազեցվող (չհարկվող) եկամուտները: Մասնավորապես՝ հաշվարկի [2.9] տողում լրացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմաների (չափերի) սահմաններում աշխատողի գործուղման հետ կապված ծախսերի գծով փոխհատուցման գումարները:

Ո՞ր տողում պետք է լրացնել պետության կողմից սոցիալական վճար վճարող հանդիսացող քաղաքացու կուտակային կենսաթոշակային կառավարչին կատարված վճարումները:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով կուտակային կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում ֆիզիկական անձի համար (օգտին) ՀՀ պետական բյուջեից հատկացվող լրացուցիչ միջոցները լրացվում են Եկամտային հարկի եւ սոցիալական վճարի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) [2.5] տողում:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԵԼՈՒՅԹ՝ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ Գեղամ Գեւորգյանը մեկնել է Բրազիլիա՝ մասնակցելու Կոստա դու Սաուիպե քաղաքում կայանալիք «Մրցակցության միջազգային ցանց» կազմակերպության (ICN) տարեկան համաժողովին:

Համաժողովի շրջանակներում ՄՊՀ նախագահը հանդես կգա ելույթով, որում կներկայացնի հանձնաժողովի կողմից Մրցակցության միջազգային ցանցի լավագույն փորձի կիրարկման արդյունքները:

Համաժողովի ընթացքում տեղի են ունենալու քննարկումներ նախորդ տարիների գործունեության արդյունքների, մրցակցային քաղաքականության եւ կիրարկման, հակամրցակցային համաձայնությունների, շահերի պաշտպանության, համակենտրոնացումների վերահսկման ու միակողմանի վարքագծին առնչվող հարցերի շուրջ: Նախատեսվում է նաեւ հանդիպում Իտալիայի մրցակցային մարմնի նախագահ Ռոբերտո Ռուստիչելիի հետ:

ՄՊՀ-ն Մրցակցության միջազգային ցանցին անդամակցում է 2001 թվականից: Կազմակերպությունը կոչված է խթանելու մրցակցային մարմինների համագործակցությունն ամբողջ աշխարհում:

ԱՌԱՆՑՔՈՒՄ՝ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Հայաստանի Եվրոպական բիզնես ասոցիացիան (EBA) ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ համատեղ մայիսի 13-ին կազմակերպել էր «Միջազգային կորպորացիաների եւ ներդրողների դերը որպես բարձր տեխնոլոգիաների էկոհամակարգի զարգացման կատալիզատոր» խորագրով համաժողովը: Միջոցառմանը ՀՀ ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանը հանդես է եկել բացման խոսքով, ողջունել մասնակիցներին, շնորհակալություն հայտնել Եվրոպական բիզնես ասոցիացիային՝ակտիվ համագործակցության համար:

«Նշել եմ, որ ՀՀ-ի տնտեսության առանցքում պետք է լինի բարձր տեխնոլոգիաների զարգացման տեսլականը՝ հանդիսանալով ոչ թե որպես առանձին ոլորտ, այլ իբրեւ շոգեքարշ՝ տնտեսության մյուս բոլոր ճյուղերի համար: Անդրադառնալով միջազգային ներդրումների ներգրավման անհրաժեշտությանը՝ ընդգծել եմ, որ ՀՀ կառավարությունը լավագույնս գիտակցում է իր անելիքների ու պատասխանատվության չափաբաժինը: Այս համատեքստում ներկայացրել եմ հիմնական քայլերը, որոնք իրականացնում ենք ներդրումային միջավայրն առավել գրավիչ դարձնելու համար: Միջոցառման շրջանակում կազմակերպված պանելային քննարկման ընթացքում փոխնախարար Ռուբեն Սիմոնյանը խոսել է բարձր տեխնոլոգիաների էկոհամակարգի զարգացման գործում նախարարության դերի, այդ համատեքստում պետություն-մասնավոր համագործակցության, ինչպես նաեւ տեղական եւ միջազգային ստարտափների զարգացմանն ուղղված քայլերի մասին». - ասված է նախարարի Ֆեյսբուքի գրառման մեջ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՊԱԼԱՏՆԵՐ»

ՓԱՌԱՏՈՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿՆԵՐԱՌԻ ԵՐԵՔ ՀԱՄԵՐԳ

Առաջին անգամ Հայաստանում հունիսի 16-23-ը «Սանկտ Պետերբուրգի դալատներ» միջազգային երաժշտական փառատոնը Երեւանում հանդես կգա համերգներով՝ Ռուսաստանի վաստակավոր արտիստ Մարիա Սաֆարյանցի ղեկավարությամբ:

Շաբաթվա ընթացքում Երեւանի երաժշտական տարբեր հարթակներում՝ հինավուրց Զվարթնոցի տաճարի բացօթյա հրապարակում, Հայաստանի օպերայի եւ բալետի ազգային թատրոնում, Արամ Խաչատրյան համերգասրահում հանդես կգան համաշխարհային աստղեր Իտալիայի, Ռուսաստանի եւ Հայաստանի երաժշտական բեմերից:

Փառատոնի հանդիսավոր բացումը տեղի կունենա հունիսի 16-ին հինավուրց Զվարթնոցի տաճարում: Երեւանցիները եւ հյուրերը կվայելեն դյութիչ պատմաերաժշտական ներկայացում՝ նվիրված Տիգրան Մեծին: «Տիգրան Մեծի մետամորֆոզները» միջազգային վիթխարի երաժշտական նախագիծ է նեապոլիտանական երաժշտական գրադարանի հետ համագործակցությամբ, որը տրամադրել է իտալացի մեծագույն կոմպոզիտորներ Վիվալդիի, Սկարլատիի, Պերգոլեզիի, Պիչինիի օպերաների բացառիկ նոտաները: Զվարթնոցի տաճարի դիմաց գտնվող բացօթյա հրապարակի խորհրդավոր մթնոլորտում կարտացոլվի լեգենդար հրամանատարի պատմությունը, ում կայսրությունը տարածվել է «ծովից ծով». արքայից արքա Տիգրան Մեծի ստեղծած տարածքը հենց այսպես է կոչվել: Մեկ երեկոյի ընթացքում տարածությունը կվերածվի կախարդական վայրի, որտեղ կճախրեն հավերժահարսները, կախարդական վիշապը եւ նույնիսկ ոսկե կառքը:

Ելույթ կունենան օպերային բեմի համաշխարհային աստղեր Իտալիայից, Հայաստանից եւ Ռուսաստանից. իտալացի հռչակավոր հազվագյուտ կոնտրտենոր ձայն ունեցող Աուրելիո Սկյավոնին, Միխայլովսկի եւ Մարիինյան թատրոնների մենակատարներ, ինչպես նաեւ ճանաչված իտալացի դիրիժոր Քրիստիան Դելիզոն: Բարոկկո դարաշրջանի թատրոնի զարմանալի կերպարները կներկայացնեն «Փոքր Տրիանոն» պատմական պարի թատրոնի արտիստները: Հանդիսատեսի համար հատուկ նվեր կլինի Սանկտ Պետերբուրգից հայտնի ջութակահար, փառատոնի գեղարվեստական ղեկավար Մարիա Սաֆարյանցի ելույթը: Մարիան նվագում է իտալացի հռչակավոր վարպետի հին ջութակով: Հետաքրքրաշարժ պատմաերաժշտական ներկայացման բեմադրիչն է պետերբուրգյան հայտնի ռեժիսոր Արկադի Ղեւոնդովը:

Հունիսի 18-ին Հայաստանի օպերայի եւ բալետի ազգային թատրոնում տեղի կունենա գալա համերգ, որը կմեկտեղի մեր ժամանակների ամենավառ եւ նշանավոր վոկալիստների՝ Սանկտ Պետերբուրգի, Մոսկվայի եւ Երեւանի առաջատար օպերային թատրոններից:

Աշխարհահռչակ Մարիինյան, Միխայլովսկի եւ Մեծ թատրոնների, ինչպես նաեւ Հայաստանի օպերայի եւ բալետի ազգային թատրոնի առաջատար վոկալիստները հանդես կգան համաշխարհային հայտնի բաս Ֆյոդոր Շալյապինին նվիրված համերգին: Կհնչեն ամենագեղեցիկ արիաները, ռոմանսները, երգեր հոբելյարի երգացանկից: Հյուրերը կտեսնեն Շալյապինի ստեղծած կերպարները եւ կընկղմվեն նրա ապրած դարաշրջանի արտասովոր մթնոլորտի մեջ:

Հունիսի 23-ին Արամ Խաչատրյան համերգասրահում կկայանա գալա-համերգ Իտալիայից եւ Ռուսաստանից ամենահեղինակավոր մրցույթների հաղթողների մասնակցությամբ: Բոլոր ժամանակների գլուխգործոցներ եւ կինոերաժշտության հիթեր կհնչեն վիրտուոզ ակորդեոնիստ Սիմոնե Զանկինիի (Իտալիա), աշխարհի ամենահեղինակավոր մրցույթների, այդ թվում՝ Չայկովսկու անվան միջազգային մրցույթի դափնեկիր, հայկական ծագմամբ հայտնի պետերբուրգյան դաշնակահար Իլյա Պապոյանի, Ա. Սաքսի անվան սաքսոֆոնիստների հայտնի մրցույթի պատմության մեջ ռուս առաջին՝ Գրան-պրիի տիտղոսակիր Սերգեյ Կոլեսովի, Ռուսաստանի վաստակավոր արտիստ, ջութակահարուհի, իտալացի հայտնի վարպետի հազվագյուտ ջութակով նվագող Մարիա Սաֆարյանցի կատարմամբ: Համերգը կկայանա սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ՝ ռուս ժամանակակից առաջատար դիրիժոր, միջազգային մրցույթների դափնեկիր, նշանավոր երաժշտական դինաստիայի ներկայացուցիչ Յարոսլավ Զաբոյարկիի մասնակցությամբ:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԱԶՆԱՎՈՒՐԻ 100–ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն Արտաշատի Ամո Խարազյանի անվան դրամատիկական թատրոնում ներկա է եղել Հայաստանի ազգային հերոս, Ֆրանսիայի Պատվո լեգեոնի շքանշանակիր, աշխարհահռչակ շանսոնյե, հասարակական գործիչ Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակին նվիրված միջոցառմանը:

Ցերեկույթին մասնակցել են Արարատի մարզի 14 դպրոցներ, որոնցում դասավանդվում է ֆրանսերեն:

Դպրոցականները հյուրերին նախասրահում դիմավորել են երաժշտական կատարումներով եւ նկարչական աշխատանքների ցուցահանդեսով՝ նվիրված աշխարհահռչակ շանսոնյեին:

Բեմում ներկայացման ձեւաչափով՝ դպրոցների սաները հայերեն եւ ֆրանսերեն ներկայացրել են դրվագներ Շառլ Ազնավուրի կյանքից եւ ստեղծագործական գործունեությունից, հանդես եկել նրա հեղինակած ստեղծագործություններով, ներկայացրել պարային եւ վոկալ կատարումներ:

«Այնքան կարեւոր է, որ մենք խրախուսենք երեխաներին՝ ներկայացնելու իրենց գաղափարներն ու մոտեցումները:

Մեծահասակների կողքին երեխաներն իրենց տեսանկյունից պետք է խոսեն իրադարձությունների եւ մարդկանց մասին, ինչը կօգնի նրանց շարունակել պատմությունը եւ պահպանել մշակութային ժառանգությունը». - ասել է նախարարը:

Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է նաեւ նախաձեռնության ձեւաչափին՝ մեկ գաղափարի շուրջ համախմբված եւ 14 դպրոցների համատեղ ջանքերով կազմակերպած միջոցառմանը՝ նշելով, որ այս համագործակցությունն արժանի է մեծ գնահատանքի. «Կարեւոր է, որ դպրոցներն աշխատեն միասին, համախմբվեն ընդհանուր գաղափարների շուրջ եւ իրականացնեն դրանք»:

Ազնավուրի 100-ամյակի հոբելյանական միջոցառմանը ներկա են եղել նաեւ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը, ՀՀ Արարատի մարզպետ Սեդրակ Թեւոնյանը, ՀՀ նախագահի խորհրդական Վահրամ Դումանյանը:

ՍԻՄՖՈՆԻԿԻ ՀԵՏ ԵԼՈՒՅԹ ԿՈՒՆԵՆԱ ՆՈՍ ԲԵՆԴԻՔՍԸ

Մայիսի 20-ին՝ ժամը 19:30-ին, Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի եւ ջութակահար Նոա Բենդիքս-Բալգլիի համերգը՝ դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ: Ծրագրում կհնչեն Ղազարոս Սարյանի «Սիմֆոնիկ պատկերները», «Սիմֆոնիան» եւ Յան Սիբելիուսի «Ջութակի կոնցերտը»:

Ամերիկացի հանրահայտ ջութակահար Նոա Բենդիքսը Բեռլինի ֆիլհարմոնիկ նվագախմբի կոնցերտմայստերն է: Նա նաեւ հյուրախաղերով հանդես է գալիս եւ՛ որպես մենակատար, եւ՛ որպես կամերային երաժիշտ: Ջութակ նվագում է 4 տարեկանից. բազմաթիվ միջազգային մրցույթների դափնեկիր է:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՇԱՐԺԱՅԻ ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԸ

Հայաստանի ներկայացուցիչները մեկնարկում են Շարժայի շախմատային միջազգային մրցաշարում:

ԱՄԷ-ի Շարժա քաղաքում մեկնարկող Masters մրցաշարին կմասնակցեն շախմատիստներ Հայկ Մարտիրոսյանը, Շանթ Սարգսյանը, Սամվել Տեր-Սահակյանը եւ Մանուէլ Պետրոսյանը:

Հայաստանը մասնակիցներ կունենա նաեւ Challengers եւ Future ենթախմբերում:

Շարժայի միջազգային մրցաշարն անցկացվում է շվեյցարական մրցակարգով եւ բաղկացած է 9 տուրից: Masters կարգի մրցաշարին մասնակցում է 88 շախմատիստ:

ԺԻՐՈՒՆ ԿՏԵՂԱՓՈԽՎԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԼՍ

Ֆրանսիայի ազգային թիմի եւ իտալական «Միլան»-ի ֆուտբոլիստ Օլիվիե Ժիրուն կարիերան կշարունակի ամերիկյան ՄԼՍ-ում:

Ժիրուն, որը Ֆրանսիայի հավաքականի կազմում 2018 թվականին դարձավ աշխարհի չեմպիոն, իր հայտարարության մեջ շեշտել է, որ վերջին երկու հանդիպումներն է անցկացնում «Միլան»-ի կազմում:

37-ամյա ֆուտբոլիստը կարիերան կշարունակի «Լոս Անջելես»-ում: Պայմանագիրը նախատեսված է 1,5 տարվա համար:

ՄԱՐՏԻԿՆԵՐԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ

Հայաստանի բռնցքամարտի կանանց եւ տղամարդկանց թիմերը վերջին հավաքն են անցկացնում Փարիզի Օլիմպիական խաղերի վարկանիշային մրցաշարից առաջ:

Կարեն Աղամալյանի եւ Ռաֆայել Մեհրաբյանի գլխավորած թիմերը Երեւանի «Օլիմպավան»-ում ընդլայնված կազմով նախապատրաստվում են Թաիլանդում կայանալիք վարկանիշային մրցաշարին:

Միջազգային օլիմպիական կոմիտեի հովանու ներքո անցկացվող մրցաշարը վերջինն է, որտեղ բռնցքամարտիկները կկարողանան ուղեգիր նվաճել Փարիզի 33-րդ ամառային Օլիմպիական խաղերի համար:

Թաիլանդի վարկանիշային մրցաշարը կմեկնարկի մայիսի 23-ին:

Հայաստանի դեռեւս ոչ մի ուղեգիր չի նվաճել բռնցքամարտում:

● Մայիսի 16-ին՝ ժամը 20:00-ին, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում կցուցադրվի «Ծաղիկներ Էլջերնոնի համար» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 4000 դրամ:

Ժողովուրդ
www.ArmLur.am

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՐՑ. Արդյո՞ք հնարավո՞ր է գրանցման/վերագրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ առանց գործակալություն ֆիզիկապես ներկայանալու:

Արամ Ստեփանյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛, ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 1109-Ն որոշման հավելված 2-ի համաձայն՝ հասարակական կազմակերպությունների պետական գրանցման, փոփոխությունների պետական գրանցման կամ պետական գրանցման մերժման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորն իրականացնում է դիմողի նույնականացման, պետական տուրքի գանձման, փաստաթղթերի ընդունման, փոխադրման եւ հանձնման գործառույթներ:

Իրավաբանների հայկական ասոցիացիա

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վերոնշյալ որոշման հավելված 1-ով սահմանված է օպերատորների ցանկը, որոնք են՝
1. «ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերություն
2. «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն
3. «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն
4. «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն
5. «ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն
6. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
7. «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
8. Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
9. «ՄՈԲԻ ԴՐԱՄ» փակ բաժնետիրական ընկերություն
10. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն:

Հետեւաբար փաստաթղթերը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն հնարավոր է ներկայացնել վերոնշյալ ընկերությունների գրասենյակների միջոցով:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ի՞նչ է կենտրոնական բանկի անկախությունը, եւ ինչո՞ւ է այն չափվում:

Աշոտ Գեւորգյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գների կայունության ապահովման համար ինստիտուցիոնալ կարեւոր նախապայման է ԿԲ-ների անկախությունը: Ուսումնասիրությունները վկայում են, որ ԿԲ-ների անկախությունը (գործառնական) նպաստում է իրականացվող դրամավարկային քաղաքականության վարկունակությանը՝ մեծացնելով շուկայի արձագանքը ԿԲ ազդակներին: Էմպիրիկ վերլուծությունները բացահայտել են ԿԲ-ի անկախության եւ ցածր գնաճի միջեւ ուղղակի կապ:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Դրամավարկային քաղաքականության իրականացման առումով տարբերակում են ԿԲ-ի անկախության երեք աստիճան՝
- նպատակի սահմանման,
- նպատակային ցուցանիշի սահմանման,
- գործառնական:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի ֆուտբոլի առաջնության՝ Պրեմիեր լիգայի 34-րդ տուրում «Փյունիկ»-ն արտագնա խաղում մրցեց ԲԿՄԱ-ի հետ եւ 3 «անպատասխան» գնդակ ուղարկեց «բանակայինների» դարպասը:

«Փյունիկ»-ը հաղթեց ԲԿՄԱ-ին եւ մնում է չեմպիոնական մրցապայքարում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	0 + 3	+10 + 14
Կոտայքի լեռներ	+ 1 + 4	+10 + 12
Կոտայքի նախալեռներ	+ 5 + 8	+16 + 18
Գեղարքունիք	+ 1 + 5	+13 + 17
Լոռի	+ 2 + 5	+13 + 16
Տավուշ	+ 4 + 8	+17 + 19
Արագածոտնի լեռներ	0 + 4	+9 + 13
Արագածոտնի նախալեռներ	+ 6 + 9	+16 + 19

Արարատ	+9 + 12	+20 + 23
Արմավիր	+ 8 + 10	+20 + 22
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5	+11 + 13
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 11	+19 + 22
Սյունիքի հովիտներ	+ 8 + 12	+22 + 25
Սյունիքի նախալեռներ	+ 6 + 8	+14 + 17
ԼՂՀ	+ 7 + 9	+13 + 16
Երեւան	+ 13 + 15	+ 15 + 17

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.5.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*